<<Երևանի լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսուցիչ ՝ Գայանե Նիկոյան
Ղեկավար՝ Օհաննա Ավետիսյան

Առարկա՝ «Անգլերեն»
ԹԵՄԱ՝ Նորարարական տեխնոլոգիաները՝ անգլերեն լեզվի դասավանդման գործիք

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

3. ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

4. ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անվիճելի է, որ ժամանակակից պայմաններում երբեք չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպես սովորողների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպելու այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի դպրոցականների հոգեկան, մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին: Զարգացումը դառնում է մանկավարժական գործընթացի գլխավոր բառը՝ որպես «սովորել» հասկացության այլընտրանք:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հասարակությունը կամ ինչպես անվանում են՝ հետարդյունաբերական հասարակությունը, ի տարբերություն 19-րդ դարի վերջի և 20 -րդ դարի կեսերի արդյունաբերական հասարակության, շատ ավելի շահագրգռված է, որ իր քաղաքացիները կարողանան ինքնուրույն, ակտիվ գործել, կայացնել որոշումներ, ճկուն կերպով հարմարվել կյանքի պայմաններին: Այստեղից՝ արդի տեղեկատվական հասարակությունը բոլոր ուսումնական հաստատությունների և հատկապես դպրոցների առաջ դնում է հետևյալ խնդիրները՝ պատրաստել շրջանավարտներ, որոնք ունակ են.

ճկուն կերպով հարմարվել կյանքի փոփոխվող իրավիճակներին,ինքնուրույն ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ՝ գործնականում հմտորեն դրանք կիրառել ի հայտ եկող տարբեր խնդիրների լուծման համար, որպեսզի հետագայում հնարավորություն ունենան գտնելու իրենց տեղը կյանքում,ինքնուրույն վերլուծելով մտածել, կարողանալ տեսնել կյանքի իրական պրոբլեմները և փնտրել դրանց լուծման արդյունավետ միջոցներ՝ օգտագործելով տեխնոլոգիաները:

Հստակ գիտակցել, թե իրենց ձեռք բերած գիտելիքները որտեղ և ինչպես կարող են օգտագործվել, ստեղծագործաբար մտածել և զարգացնել նոր գաղափարներ,

* ճիշտ աշխատել տեղեկատվության հետ՝ կարողանալով հավաքել տվյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ փաստերը,
* լինել հաղորդակցվող, սոցիալական տարբեր խմբերին առնչվող:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Մեր ուսումնասիրության թեման ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն է ուսումնական գործընթացի ակտիվացման նպատակով: Նշված թեմայի քննությունը արդիական նշանակություն ունի, քանի որ ժամանակն իր կառուցողական պահանջներն է առաջադրում կրթական համակարգերին, ուսումնական գործընթացին, և պարտավոր ենք հաշվի առնել տեղեկատվական տեխոլոգիաների ունեցած ազդեցությունը երեխայի ուսումնական ակտիվացման գործընթացում: Օգտագործվող տեղեկատվական միջոցներն են համակարգիչը, ձայնագրությունը, ֆիլմը և տեսաֆիլմը: Համակարգչային միջավայրը հնարավորություն է տալիս աշակերտին ուսումնական գործունեության ընթացքում և հետևել նրա ակտիվությանը: Նշված հանգամանքով էլ պայմանավորված է մեր թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ: Մեր հետազոտության օբյեկտը անգլերենի ուսումնական գործընթացն է, իսկ հետազոտության առարկան՝ այդ գործընթացում ուսուցման ակտիվության նպատակով կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ: Մեր հետազոտության նպատակն է քննել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ուսումնական գործընթացի ակտիվացման տեսանկյունից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Առաջադրված նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

ա) ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ուսումնական գործընթացում,

բ) վերհանել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ուսումնական գործընթացի ակտիվության առումով:

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Թեմայի հետազոտման նպատակով իրականացրել ենք տեսական գրականության ուսումնասիրում: Մեր աշխատանքը կարող է օգտակար լինել ուսուցիչներին նմանօրինակ հետազոտություններ կատարելիս:

Գիրքը, գրատախտակը, կավիճը, առաջադրանքներով քարտերը, թղթե պաստառները մանկավարժության տարրեր են, որոնք համարվում են լավագույն հին տեխնոլոգիաներ: Նոր սերունդը, որը մեծացել է հեռուստացույցների, համակարգիչների և հեռախոսներ ժամանակաշրջանում, ունի ավելի մեծ տեսողական հիշողություն և ուսուցչից պահանջում է ուրիշ մոտեցումներ: Ցանկացած մանկավարժ գիտակցում է, որ նոր տեղեկատվական տեխնոլոգիաները ունեն մեծ ազդեցություն կրթության բնագավառում.

ընդլայնվում են տեղեկատվություն փնտրելու և գտնելու

հնարավորությունները, ինչը նշանակում է ավելի մանրակրկիտ յուրացնել այս կամ այն նյութը, լայն հնարավորություններ է տալիս մանկավարժին աշակերտին սովորեցնելու ինքնուրույն աշխատել ոչ ավանդական մեթոդով, փնտրել այս կամ այն խնդրի լուծումը,

հնարավորություն է տալիս տարաբնույթ աշխատելու, արագ և ճիշտ ձևով վերահսկելու աշակերտին, ինչը հնարավորություն է տալիս դասը կազմակերպելու այնպես, որ ցանկացած աշակերտ դասը յուրացնի,

տարբեր համակարգչային գործոնների միջոցով ակտիվացնելու աշակերտի իմացական հետաքրքրությունները,

բացատրական աշխատանքից անցնելու գործնականի, որի ընթացում աշակերտն է գործունեության ակտիվ օբյեկտը,

զարգացնելու աշակերտների ճիշտ դրսևորումը շրջապատում, տվյալ նյութի հետ ճիշտ աշխատելը, որը ներառում է տվյալ նյութի փնտրում, վերարտադրում և պահպանում, անցկացնել դասը բարձր էսթետիկ համակարգով:

Լեզվի սովորումը ենթադրում է յուրաքանչյուր բառի, արտահայտության, մտքի և խոսքի գիտակցված սովորում, կառուցում և շարադրում: Այս առումով ՏՀՏ օգտագործումը որակապես կփոխի նաև անգլերեն ուսուցչի դերը. ուսուցիչը կդառնա ոչ միայն և ոչ այնքան գիտելիք հաղորդող, որքան սովորողի կրթական գործը կազմակերպող, նրա հետ ուսումնական նյութը ընտրող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր: Հետևաբար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելիս պետք է կարևորվի ուսուցիչների համակարգչային գիտելիքների և հմտությունների զարգացումը և կարծրացած մոտեցումների և հոգեբանական բարդույթների հաղթահարումը: Ինչպես նշում է Հ. Հ. Պետրոսյանը, «մանկավարժական գործունեության բնագավառում մասնագետների

գործունեության մեջ առանձնացվում են մասնագիտական կոմպետենտության հետևյալ բաղադրիչները՝ նախագծային և պլանավորման, ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, տեխնոլոգիական, արժևորվման և գնահատման, կազմակերպչական, կառավարչական, գիտահետազոտական»:
Հատկանշական է այն, որ համարյա բոլոր ուսուցիչները, ունենալով համակարգիչ, հստակորեն չեն պատկերացնում տեղեկատվական կոմպետենցիայի դերը: Ռ. Պ. Միլրուդը ավելի է առաջ գնում և ներմուծում է տեղեկատվական- մանկավարժական կոմպետենցիա հասկացությունը, որը ներառում է թվային, ռեսուրսային և տեխնոլոգիական բաղադրիչները:
Տեղեկատվական - մանկավարժական կոմպետենցիայի թվային բաղադրիչը միավորում է համակարգչի և համացանցի մասին ուսուցչի գիտելիքները: Ռեսուրսային բաղադրիչը նշանակում է անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու և օգտագործելու կարողություն, իսկ տեխնոլոգիական բաղադրիչը ենթադրում է, որ ուսուցիչը պետք է կարողանա ոչ միայն օգտվել համակարգչից և համացանցից, այլև դրանց միջոցով մշակել տեղեկատվությունը: Ուսուցիչը պետք է կարողանա ներկայացնել, հրատարակել տեղեկատվությունը, համակարգչի միջոցով մշակել, օգտվել էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրներից, բառարաններից, տեղեկատուներից, ուղեցույցներից, ուսուցողական կայքերից և ծրագրերից և այլն: Միայն համակարգչից օգտվելու կարողությունները բավական չեն համապատասխան լեզվաբանական, հաղորդակցական, մեթոդական կոմպետենցիա ձևավորելու համար:

Անգլերենի ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել իր սեփական մեթոդական նյութերը և անգամ դրանք զետեղել համացանցում: Առանցքային նշանակություն ունի նշված մոտեցման մեջ ստեղծագործական կոմպետենցիան, որը վերաբերում է տարբեր մեթոդական խնդիրներ լուծելիս ստեղծագործական ունակությունների դրսևորմանը: Ըստ անգլերենի ուսուցչի մեթոդական կոմպետենտության բաղադրիչների առանձնացվել են այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են համապատասխան գործունեություն ծավալելու համար: Ակնհայտ է, որ միայն հաղորդակցական, լեզվամշակութային կոմպետենտություն ձևավորելով՝ հնարավոր չէ մասնագիտական-մանկավարժական գործունեություն ծավալել: Մեթոդական և մասնագիտական կոմպետենտությունների հարաբերակցությունը որոշելիս պարզվում է, որ առաջինը վերջինիս կարևորագույն բաղադրիչն է և հնարավոր չէ զարգացնել մեկը, առանց զարգացնելու մյուսը:

Այսպիսով՝ անգլերենի ուսուցիչը, ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները ճիշտ օգտագործելով, դպրոցում՝
1. ապահովում է կրթության դրական շարժառիթ, ակտիվացնում սովորողների իմացական գործունեությունը,
2. դասերը անցկացնում է էսթետիկ և հուզական մակարդակով՝ ապահովում է պատկերավորությունը և օգտագործելով տարբեր քանակի նյութեր,
3. ընդլայնում է սովորողի ինքնուրույն գործելու հնարավորությունը և այլն: Անգլերենի ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել իր սեփական մեթոդական նյութերը և անգամ դրանք զետեղել համացանցում: Առանցքային նշանակություն ունի նշված մոտեցման մեջ ստեղծագործական կոմպետենցիան, որը վերաբերում է տարբեր մեթոդական խնդիրներ լուծելիս ստեղծագործական ունակությունների դրսևորմանը: Ըստ անգլերենի ուսուցչի մեթոդական կոմպետենտության բաղադրիչների առանձնացվել են այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են համապատասխան գործունեություն ծավալելու համար: Ակնհայտ է, որ միայն հաղորդակցական, լեզվամշակութային կոմպետենտություն ձևավորելով՝ հնարավոր չէ մասնագիտական-մանկավարժական գործունեություն ծավալել: Մեթոդական և մասնագիտական կոմպետենտությունների հարաբերակցությունը որոշելիս պարզվում է, որ առաջինը վերջինիս կարևորագույն բաղադրիչն է և հնարավոր չէ զարգացնել մեկը, առանց զարգացնելու մյուսը:

Համակարգիչը, պրոյեկտորը և ինտերակտիվ գրատախտակը կարելի է օգտագործել որպես՝ անհատական կրթության միջոց, կրթական նյութի կազմակերպման միջոց, ակնթարթորեն աշակերտի հաջողությունների և ստացած տեղեկատվությունը գնահատող միջոց, նոր նյութի բացատրման,

կրկնման և միավորման համար: ՏՀՏ կիրառումը անգլերենի դասերին թույլ է տալիս.
1. սովորողների մեջ զարգացնել կարողություն կողմնորոշվելու շրջապատող միջավայրի տեղեկատվական հոսքերի մեջ,
2. տիրապետել տեղեկատվության հետ աշխատանքի գործնական միջոցներին,
3. զարգացնել կարողություններ, որոնք թույլ կտան փոխանակվել տեղեկատվությամբ ժամանակակից տեխնիկական միջոցների օգնությամբ,
4. բարձրացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,
5. անցկացնել դասեր բարոյախրատական բարձր մակարդակով, աշակերտներին մոտենալ անհատական՝ կիրառելով բազմապիսի առաջադրանքներ

Պրեզենտացիաների կիրառումը պարզապես անփոխարինելի է դասերի ժամանակ: Նյութը, որը ավանդական ձևով դժվար է ընկալվում էլեկտրոնային առաջադրանքների միջոցով, երեխաների մեջ բացահայտում է հետաքրքրություն առարկայի հանդեպ, և խորանում են գիտելիքները: Այդ դասերի արդյունավետությունը բարձր է: Համակարգիչը ձևավորում է նյութի ռացիոնալ հիշելու ընդունակությունները: Սովորողների համար հեշտ է հիշել դժվար նյութը սխեմաների և աղյուսակների միջոցով, որտեղ կրճատ և տեսանելիորեն երևում է ուսումնասիրվող նյութը: Ինտերակտիվ գրատախտակը թույլ է տալիս բավականաչափ ընդլայնել նյութի բացատրման հնարավորությունները:

Այսպիսով՝ համակարգիչը թույլ է տալիս անգլերեն դասավանդող ուսուցչին բավականաչափ ընդլայնել տարբեր տիպի տեղեկատվության ներկայացման հնարավորությունը: Դիդակտիկ ճիշտ մոտեցման ժամանակ համակարգիչը ակտիվացնում է սովորողների ուշադրությունը, ուժեղացնում է մոտիվացիան, զարգացնում ճանաչողական գործընթացները, մտածելակերպը, ուշադրությունը, զարգացնում է մտահորիզոնը և պատկերացումները: Ուսուցման համակարգչային տեխնոլոգիաները հավաքագրման, վերամշակման, պահպանման և տեղեկատվության փոխանցման գործընթացներ են սովորողի համար:

Գործնական մաս

Անգլերենի դասերին ուսումնական գործընթացի ակտիվացման նպատակով կիրառում ենք տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ համակարգիչ, լսողական բազմատեսակ սարքեր: Հատկապես առանձնանում են լսողական վարժություններին առնչվող տարբեր առաջադրանքները:

Դիտարկենք մի շարք առաջադրանքների տեսակներ:

1. Ինքնուրույն աշխատանք

Այս դեպքում աշխատանքը կարող է կատարվել ինքնուրույն, զույգերով կամ խմբերով: Այս կարգի աշխատանքի նպատակն այն է, որ աշակերտներն ինքնուրույն աշխատեն: Առաջադրանքները չեն առանձնանում՝ հաշվի առնելով առանձին անհատների պահանջները, բոլորը միևնույն առաջադրանքն են կատարում: Առաջադրանքներն ընտրելիս հաշվի չեն առնվում աշակերտների անձնական

հատկանիշների ու կարողությունների տարբերությունները:

2. Զույգերով աշխատանք

Զույգերով աշխատանքի ընթացքում, նույն ընդունակություններով երկու աշակերտ աշխատանքը կատարում են միմյանց հետ համագործակցելով: Սա միատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է:

Միասին սովորող զույգերի դեպքում աշակերտներից մեկն իր ընդունակություններով զիջում է մյուսին: Ավելի բարձր ընդունակություններով աշակերտը կատարում է «ուսուցչի» դերը: Սա բազմատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է: Զույգերը կարող են ձևավորվել մշտապես կամ ժամանակավորապես, կամ էլ որևէ առարկայի շուրջ:

Այս հմտությունը կարելի է կիրառել պատմողական առարկաների դասավանդման ժամանակ, իսկ օտար լեզու առարկայի ժամանակ պատմվածքի դեպքում կամ էլ որևէ տեղեկատվական աղբյուր ուսումնասիրելիս:

3. Անհատական աշխատանք

Յուրաքանչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ և սովորելու անհատական ոճ: Այս փաստը պետք է հաշվի առնել չափազանց բարձր կամ չափազանց թույլ ընդունակություններով աշակերտների պարագայում: Աշակերտի անհատական ընդունակությունները զարգացնելու համար կազմված ծրագիրը կոչվում է անհատականացում: Այն հատկապես օգտակար է շնորհալի երեխաների հետ աշխատելիս, կամ երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Կարելի է կիրառել շերտավոր ուսուցման ժամանակ, երբ ուսուցիչը ժամանակ է հատկացնում թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին, իսկ լավ սովորողներին հանձնարարում է ինքնուրույն աշխատանք:

Օրինակ՝ Լավ սովորողներին երկու կամ երեք վարժություն այլ դասագրքից, իսկ թույլերին հիմնական դասագրքից:

4. Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը հաջողված մեթոդ է, որի միջոցով գերազանց հաղորդակցություն է լինում սովորողների միջև և ստեղծում է ակտիվ թիմային աշխատանք: Շատ արժեքավոր է սկսնակ ուսուցիչների համար: Համագործակցային ուսուցումը դրսևորվում է փոքր թիմերով, որտեղ տարբեր մակարդակի աշակերտներ են մասնակցում և կիրառում են բազմազան գործունեություններ ըստ ուսումնական պլանի ՝ ամրապնդելու համար իրենց գիտելիքները: Խմբում յուրաքանչյուր աշակերտ իրեն համարում է կարևոր:

5. Թիմային աշխատանք

Հետազոտությունը ցույց է տալիս, որ թիմային աշխատանքը ունի դրական ազդեցություն սովորելու դասապրոցեսի ժամանակ, քանի որ այն ստեղծում է մի միջավայր, որտեղ սովորողները սովորեցնում և բացատրում են հասկացությունները միմյանց: Այն ամրապնդում է տեղեկատվությունը, որը հսկվում է ղեկավարի կողմից: Այն խրախուսում է աշակերտներին արժևորել թիմային աշխատանքը և հասնել առավել բարձր արդյունքների, սովորեցնելով աշակերտներին հմտություններ, որոնք կարևոր են մասնագիտական գործընթացի ժամանակ: Գնահատման գործընթացը նույնպես թիմային է և նրանք պետք է ապահովեն հետադարձ կապը:

Այս մեթոդի շնորհիվ աշակերտները զարգացնում են միմյանց հետ շփվելու կարողությունները ուրիշներին սովորեցնելու միջոցով, ինչպես նաև քննարկելու, բացատրելու, հասկանալու կարողությունները: Թեման բաժանվում է մասերի և սովորողներին լայն հնարավորություն է տալիս հաղթահարելու առավել բարդ առաջադրանքները: Նրանք դառնում են պատասխանատու, վերահսկում են ժամանակը, ավելի արդյունավետ են պլանավորում: Ղեկավարը օգնում է նրանց նոր խնդիրները հաղթահարել յուրովի, որն էլ իր հերթին նպաստում է բարելավելու ղեկավարի

հեռանկարները հետագայում ավելի լավ դասավանդելու համար: Ղեկավարը պետք է հսկի խմբի բոլոր անդամներին ակտիվ մասնակցելու համար, օժանդակի սովորողներին անհրաժեշտության դեպքում: Այս մեթոդը ավելի ժամանակատար է քան ավանդական մեթոդները: Երբեմն աշակերտները վիճաբանում են որոշումներ կայացնելիս, նրանց հայացքները տարբերվում են, սակայն ղեկավարի օգնությամբ մի ընդհանուր հայտարարի են գալիս:
Այս մեթոդը նպատակահարմար է քերականական դժվարություն ներկայացնող թեմաների ժամանակ և բարդ տեղեկատվություն հաղորդելու ժամանակ: Խորհուրդ է տրվում կիրառել ուսուցչի բացատրելուց հետո:
Օրինակ՝ Քերականական որևէ բարդ նյութ՝ **<<Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք>>- <<Direct Speech and Reported Speech>>**, որը համեմատում են մայրենի լեզվի կամ այլ լեզվի հետ՝ միմյանց մանրակրկիտ բացատրելով:

Որոշ ուսուցիչներ սովորեցնում են խաղերի միջոցով՝ հատկապես տարրական և նախադպրոցական դասարաններում: Խաղերի միջոցով սովորողները ըմբռնում են նյութը նույնիսկ առանց գիտակցելու: Խաղերը պետք է լինեն մատչելի, տարիքին և գիտելիքին համապատասխան: Այս մեթոդը արդյունավետ է ցանկացած տարիքի աշակերտների համար, դրդապատճառ է հանդիսանում ակտիվ լինելու համար: Աշակերտներից պահանջվում է հանելուկներ հորինել, գուշակել և փնտրել համացանցում:
Նոր նյութը լրացնող խաղեր, հետաքրքրաշարժ վարժությունները օգտագործվում են տաղանդավոր աշակերտներին խրախուսելու նպատակով և գիտելիքների լրացուցիչ գործնական կիրառում ապահովող խաղային վարժությունները՝ դասընկերներից հետ չմնալու նպատակով:
Միջին ընդունակության տեր աշակերտի համար նախատեսված պարզ, կարճ վարժություններ՝ հանձնարարված նյութի ընկալմանն օժանդակելու նպատակով:
Աշակերտներին զբաղված պահելու համար նախատեսված վարժությունները պետք է լինեն՝ կարճ (ոչ ժամանակատար), դժվարության որոշակի մակարդակի (ձեռքբերման իրական զգացում ապահովելու համար), խաղային և հետաքրքիր (աշակերտներին շահագրգռող):
Օրինակ՝ 1. Գրատախտակի վրա գրել աշխարհագրական անուններ, որոնց վերջնատառը պետք է լինի նոր բառի սկզբնատառը:
2. Գրել երկրների անուններ, որոնց հիման վրա աշակերտները պետք է գրեն բառեր և արտահայտություններ, ինչպես նաև տեսարժան վայրերի անուններ: Կհաղթի այն շարքը, որը ավելի շատ բառ կգրի:

6. Դերախաղը՝ որպես ուսուցման եղանակ
Ստեղծագործական դերախաղը գիտելիքն անձնավորելու փորձ է: Դերախաղը արժևորված մեթոդ է, որը խրախուսում է աշակերտներին ավելի լավ գիտելիքներ ձեռք բերել: Որպես հիմնական հասկացություններ հանդես են գալիս դերը և նույնացումը: Դա նշանակում է, որ աշակերտները դեր են խաղում՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում:Կախված առաջադրանքից՝ նրանք կարող են մարմնավորել հենց իրենց՝ որոշակի իրավիճակում, կամ էլ որոշակի բնութագիր ունեցող: Բայց նույնիսկ վերջին դեպքում աշակերտի անձը փոխազդեցության մեջ է մտնում իր կողմից մարմնավորվող կերպարի հետ: Ահա թե ինչպես, իդեալական դեպքում, նրանք կարող են հասկանալ խնդիրը սեփական փորձառության միջոցով: Երբեմն աշակերտները անպատրաստ են լինում և անհարմար են զգում մասնակցելու դասավանդման այս դերախաղի մեջ, չնայած այն համարվում է արդյունավետ մեթոդ: Այս մեթոդը նաև անհարմար է սկսնակ ուսուցիչների համար: Դերախաղի, ինչպես նաև գործնական աշխատանքի վրա հիմնված մեթոդի դեպքում հարց է ծագում՝ արդյոք այն պետք է նախորդի, թե՞ հաջորդի ուսուցչի կողմից նոր թեմայի ներկայացմանը (եթե, իհարկե, նման ներկայացումը տեղի է ունենում դասի ընթացքում): Համաձայն ավանդական տեսակետի, դերախաղը խաղ է, որը պետք է անցկացնել միայն լուրջ աշխատանքն ավարտելուց հետո. ավելին, անհնար է որևէ բան ներկայացնել, երբ աշակերտները դեռևս չեն յուրացրել տվյալ նյութի փաստերը: Որոշ դեպքերում դա այդպես է, որոշ դեպքերում՝ ոչ: Հաճախ աշակերտների համար դերախաղը դառնում է անհետաքրքիր, երբ արդեն հայտնի է, թե

նրանք ինչպես պետք է գործեն:
Մինչդեռ, եթե աշակերտները որոշակի իրավիճակ են ներկայացնում, նրանք կարող են իրենց անձնական փորձը համադրել ներկայացվող գիտելիքին հաջորդիվ:
Տարբեր իրավիճակային վարժությունների համար անհրաժեշտ է ցուցաբերել էմպատիայի տարբեր աստիճաններ:
* էմպատիան բարելավելուն ուղղված պարզ վարժություններ,
* դիլեմաներ, որոշումների կայացում,
* համատեղ որոշումներ,
*ներկայացման պատրաստում,
* հայտնի պատմությունների ներկայացում դերախաղի միջոցով,
* իրավիճակային խաղեր,
* ուսումնավարժանք,
* լուսանկարների պաստառ/հավաքածու,
* դատախաղ,
* բանավեճ
Օրինակ՝ 1. Անգլերենի դասաժամին նոր բառեր սովորելիս՝ **«խանութների անունները» 5 – րդ դասարանի** աշակերտները ներկայացնում են փոքրիկ դերախաղ հանրախանութում՝ գնումներ կատարելով և նոր բառերը կիրառելով:
2. **«Մոխրոտիկ»** հեքիաթը ներկայացնում են պարահանդեսում բեմադրելով:
7. **Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը**
Պետք է գտնել բազմազան միջոցներ Տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու համար, որոնցից են համացանցը, հեռուստածրագրերը: Համակարգիչները կարող են օգնել օտար լեզուները դասավանդելիս, ինչպես նաև այլ առարկաների դասավանդման ընթացքում: Տեսահոլովակները նույնպես օգնում են նյութը լավ ընկալելու և միտքը ավելի պարզ շարադրելու համար:
Համացանց
Օրինակ՝ 1. Հայտնի մարդկանց կյանքի մասին տեղեկություններ իմանալու և անձնական կյանքը նկարագրելու համար կարելի է կիրառել հարցերի ձևեր: Ուսուցիչը պատրաստում է կարճ թեստ հայտնի մարդու կյանքի մասին: Լեզվի մակարդակը և թեստի դժվարությունը կարող են համապատասխանեցվել աշակերտների մակարդակին և տարիքին: Աշակերտները կատարում են թեստային աշխատանքը՝ որոնելով տեղեկությունները համացանցում: Թեստն ավարտելուց հետո ամբողջ դասարանը ստուգում է պատասխանները:
2. Հաջորդ քայլով աշակերտները բաժանվում են խմբերի, ընտրում են այն գործչին, որի մասին նրանք ցանկանում են ավելի շատ տեղեկություններ իմանալ (ուսուցիչը կարող է աշակերտներին տրամադրել անունների ցանկ, որտեղից նրանք կարող են ընտրություն կատարել՝ աշխատանքն առավել արագ և համակարգված կատարելու նպատակով): Նրանք կայքում որոնում են տեղեկություններ այդ անձի մասին և նրա վերաբերյալ կազմում են թեստ: Ի վերջո, նրանք տպում են թեստերը, փոխանակում և փորձում են լուծել դրանք: Թեստերը կարող են փոխանցվել մեկ աշակերտից մյուսը, և նրանք կարող են քվեարկել ամենահետաքրքիր կամ լավագույն թեստի օգտին:
3. Լրացուցիչ հնարավորություններ
Առաջադրանքը հետագայում կատարելու համար աշակերտները կարող են որոնել տեղեկություններ և նկարներ իրենց հայրենի քաղաքի մասին և ներբեռնված տեքստը թարգմանել պահանջված լեզվով: Թարգմանության համար թույլատրվում է օգտվել միալեզու և երկլեզու համացանցում առկա բառարաններից:

8. Ֆիլմեր ու տեսանյութեր
Ֆիլմերն ու տեսանյութերը նույնպես հարմարավետ են՝ հատկապես կարճամետրաժ ֆիլմերը, որոնք զարգացնում են հասկանալու կարողությունները և հարստացնում են բառապաշարը: Օտարալեզու ֆիլմերը օգնում են աշակերտներին խոսելու պարզ և ճիշտ արտասանությամբ: Միջին դասարանների աշակերտները սիրում են կարճամետրաճ մուլտֆիլմեր և անիմացիաներ դիտել, մինչդեռ ավագ

դասարաններում աշակերտները օգտվում են նորությունների հեռարձակումների կայքերից: Օրինակ՝ Դիտեն **«Ասպետի Պատմությունը»** պատմություն առարկայից և այնուհետև քննարկեն այն հաջորդ դասաժամին:

9. Հեռուստացույցի կիրառումը

Ուսանողներին հնարավորինս լավ կրթելու համար լավագույն միջոցներից մեկը հեռուստացույցն է, որը ճիշտ հանգամանքում օգնում է սովորողին նյութը լավ ըմբռնել՝ համարվելով դասարանական ակտիվ գործունեություններից մեկը: Հեռուստածրագրերը նաև սովորողներին ապահովում են իրական երկխոսությամբ, ճիշտ առոգանությամբ ուշադիր ունկնդրելու շնորհիվ: Մեկ այլ առավելությունը այն է, որ հեռուստածրագրերի մեծ մասը համեմատաբար պարզ լեզվով են: Օտար լեզուների համար լավագույն հեռուստածրագրերից են BBC և CNN-ը:

10. Լրագրության ժանրերի կիրառումը

Համացանցում պետք է գտնել վերջին շաբաթների տպագիր մամուլում տեղ գտած նորությունների, հաղորդագրությունների, հարցազրույցների և քննադատությունների օրինակներ: Այս հոդվածները պետք է ներբեռնել և հստակ նշել դրանց աղբյուրները: Այնուհետև կատարվում է յուրաքանչյուր տեքստի համառոտ վերլուծություն, որտեղ նկարագրվում է կոնկրետ ժանրի առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ ընտրված տեքստից: Առաջադրանքը պետք է կատարվի այնպես, որ վերլուծության տեքստը առանձնացված լինի տեքստի բնօրինակից:

Օրաթերթ

Պատկերացրեք՝ օրաթերթի խմբագիր եք: Ձեր խնդիրը թերթի համարներից մեկի հիմնական՝ առաջին էջը ձևավորելն է: Ձեր թերթի համար անվանում ընտրեք: Մշակեք վերնագիրը և նշեք այս էջում ներառվելիք մնացած մյուս տեղեկությունները: Որոշեք այս էջում ներկայացվելիք հոդվածների տեսակը և դրանց տառատեսակը: Նշեք նաև նկարների տեղերը: Եվ վերջապես, պատրաստեք էջը՝ մշակած պլանի համաձայն:

Օտարալեզու ամսագրեր

Օգտագործել օտարալեզու ամսագրեր կամ այլ ամսագրեր առարկային համապատասխան: Թույլ տալ սովորողներին ընտրելու այն հոդվածն, որը նրանց ավելի շատ է հետաքրքրում, ընթերցելու հնարավորություն տալ մի քանի աշակերտի, ովքեր էլ հետագայում կզեկուցեն ամբողջ դասարանին:

Ամսագրերի հավաքածու

Դասարանային ամսագրերը կարող են լինել արդյունավետ դասավանդման միջոց, որոնք կփոխարինեն տեքստերին: Կարելի է բազմացնել որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ունենա մի օրինակ: Օգտագործեք կազմի պատկերը մտագրոհ մեթոդով մտապահելու համար այն բառերը, որոնք կան այդ պատկերի վրա (կամ էլ նմանատիպ թեմաներ, որոնք կարելի է գտնել միևնույն ամսագրի մեջ): Սովորողները իրենք կարող են ընտրել թեմաները և դուրս գրել կարևոր մտքերը: Կարելի է ընտրություն կատարել մի քանի ամսագրերից, նույնիսկ կազմի պատկերով և քվեարկության միջոցով:

11. Սահիկաշարքերի (slides) օգտագործումը

Շատ դասախոսներ և ուսուցիչներ օգտագործում են սահիկաշարք (slides) դասապրոցեսի ժամանակ: Այն նախապես պետք է կառուցված լինի դասի թեմային համահունչ: Դա ավելի հեշտ է կիրառել քան անընդհատ գրատախտակին գրել: Այն պետք է հնարավորինս պարզ և մատչելի պատրաստել: Անհրաժեշտության դեպքում օգտագործել ցուցափայտ: Առանձին նախադասություններ և բառեր օգտագործեք, տառերի չափը մեծ ընտրեք (24 և բարձր): Կարևոր միտքը շեշտելու համար գույներ օգտագործեք (կարմիր և նարնջագույն): Կարելի է պատրաստել աղյուսակներով կամ դիագրամներով: Առավել հարմար է հորիզոնական դիրքը:Յուրաքանչյուր սահիկաշարք պետք է ունենա սկիզբ,մեջտեղ և ավարտ և տևի 15-20 րոպե: Աշակերտների ուշադրությունը գրավելու համար պետք է հաճախակի փոփոխել մեթոդները:

Օրինակ՝ 1. Անգլերենի դասաժամի համար կարելի է պատրաստել սահիկաշարք **«Անգլիայի տեսարժան վայրերը»** վերնագրով: Ուսուցչուհին ցույց կտա մեկնաբանելով:
2. Աշխարհագրություն առարկայից հանձնարարել աշակերտներին որպեսզի իրենք պատրաստեն տեսանյութ տվյալ աշխարհագրական վայրը ուսումնասիրելիս:

12. Դիագրամների, աղյուսակների և գրաֆիկների կիրառում
Աղյուսակները ամենից հաճախ են օգտագործվում, որոնք շատ մատչելի և հեշտ են ընթերցվում: Շատ սովորողներ կարողանում են հեշտությամբ ըմբռնել նյութը առանց մանրակրկիտ բացատրության: Գրաֆիկները օգտագործվում են որպես վիզուալ ուսուցման մեթոդ, որոնք փոխկապակցված են մի շարք թվերի և միավորների հետ: Առավել տարածված է Վենի Դիագրամը: Վենի Դիագրամը արդյունավետ միջոց է նկարագրելու, համեմատելու և խմբավորելու համար տարբեր բաներ ըստ իրենց բնորոշ գծերի: Կարելի է նկարագրել տարբեր առարկաներ, մարդկանց, պատմական իրադարձություններ, գաղափարներ կամ ֆիզիկական ատրիբուտներ:
Հարմար է բանաձևերի, քերականական կանոնների, պատմության ժամանակագրման համար, որի միջոցով ավելի լավ է տպավորվում նյութը:
Օրինակ՝ 1. Հայերեն, ռուսերեն,անգլերեն և այլ առարկաների դասապրոցեսում ներառել ժամանակաձևերի աղյուսակը:
2. Պատմություն և Հայոց Եկեղեցու Պատմություն առարկաների ժամանակ համեմատել տարբեր ժամանակագրական իրադարձություններ:

13. Աշխատանքային թերթիկների միջոցով նյութերի տարբերակված մշակում
Ինչպես կազմել երեք տարբեր մակարդակով իրականացվող ուսման գործընթացի աշխատանքային թերթիկներ: Թերթիկները պետք է լինեն 3 մակարդակով՝ ուժեղ, միջին և թույլ աշակերտների համար: Կարող են լինել դիդակտիկ նյութերով: Կարող եք ինքնուրույն կազմել աշխատանքային թերթիկները օգտագործելով գունավոր մատիտներ և տարբեր նկարներ պատկերելով: Շատ կարևոր է պահպանել միևնույն չափը: Երբեմն աշակերտներն իրենք կարող են կազմել քարտեր:
Օրինակ՝ 1. Ցանկերի հետ աշխատանքներն ավարտելուց հետո նրանք անցնում են ցանկերով և ընտրում նրանց կարծիքով իրենց ճիշտ նկարագրող ածականները: Աշակերտները գրում են իրենց անունները և այդ ածականները փոքր քարտերի վրա և հանձնում դրանք ուսուցչին: Ուսուցիչը խառնում է քարտերը և կարդում առաջին քարտում նշված ածականները: Աշակերտները կռահում են, թե իրենց որ դասընկերոջն են նկարագրում այդ ածականները: Առաջինը կռահող աշակերտը կարող է կարդալ հաջորդ քարտը և այլն:
2. Աշակերտները քարտերի վրա գրում են այն ածականները, որոնք, նրանց կարծիքով, նկարագրում են իրենց, սակայն քարտերի վրա չեն նշում իրենց անունները: Այնուհետև նրանք սկսում են դասարանում բաժանել քարտերը և կարդալ ածականները: Նրանք կռահում են, թե ով կարող է լինել այդ անձը և քարտի հետևի մասում գրում անունը, այնուհետև փոխանցում են այն հաջորդ աշակերտին: Երբ բոլոր աշակերտները տեսնում են քարտերը, նրանք նայում են յուրաքանչյուր քարտին և քննարկում, թե արդյոք իրենց ճիշտ են կռահել:

14. Խաչբառների լուծում
Խաչբառների լուծումը պահանջում է բազմաթիվ կարևոր հմտություններ, որոնք ներառում են բառարան, ուղղագրություն: Սովորողը նախ պետք է հասկանա տերմինները, ապա հասկանա պահանջը: Այլ կարևոր հմտություններից են ընտրությունները արժևորելը, հետևություններ անելը: Այն նման է խաղի և նվազ սպառնացող է: Այն համարվում է ակտիվ ուսուցում և շատ աշակերտների է ներառում դասապրոցեսի մեջ՝ զարգացնելով ակտիվ բառապաշարը:
Օրինակ՝ Օտար լեզվի դասաժամին հագուստների անունները սովորելիս ուսուցչուհին կազմում է խաչբառ տրված նոր բառացանկով:

15. Լուսանկարների օգտագործում

Օգտագործեք լուսանկարներ քանի որ դրանք զարգացնում են երևակայությունը: Կարող եք համացանցից վերցնել և յուրաքանչյուր աշակերտի մեկ լուսանկար հատկացնել: Սա հիմնականում կիրառվում է շարադրությունների և էսեների ժամանակ,որի հիմքը լուսանկարն է հանդիսանում: Նպատակն է զարգացնելու հեղինակային, նկարագրողական և համոզիչ էսե գրելու կարողությունները:
Օրինակ՝ 9 -րդ դասարանում անգլերեն առարկայի դասաժամին ցուցադրվում է հայ տաղանդավոր հայտնիների լուսանկարները, որոնց հիման վրա աշակերտները բանավոր խոսք են կառուցում, կենսագրությունն են պատմում:

16. Ցուցահանդես դասարանում
Շրջագայությունը դասարանում և ցուցահանդեսի դիտումը հարստացնում է աշակերտների մտահորիզոնը, խրախուսում է նրանց լավ յուրացնել թեման: Նախապես պետք է լավ պլանավորված լինի այցի թեման, նպատակը, որպեսզի լավ արժևորվի: Պետք է պատրաստել պատի պաստառներ և բացիկներ, լուսանկարներ թեմային համահունչ: Ներկայացրեք տեսողական զննման հմտություններ, թույլ տալով սովորողներին մանրազնին նկարագրել յուրաքանչյուր իր ինչպիսիք են սանրը, խոզանակը, թուղթը, մատիտը, ամրակը և այլն: Ներկայացրեք թեմային բնորոշ բառապաշար, որը պետք է օգտագործվի դասարանում՝ շրջագայության ժամանակ:
Յուրաքանչյուր բնագավառի պաստառի շուրջ տարբեր աշակերտներին նշանակել որպես թեմայի մասնագետ, որոնք պետք է հետագայում ուսումնասիրեն: Սովորողները կարող են խմբավորվել ըստ թեմաների, որպեսզի իրենք նյութեր հայթայթեն տվյալ թեմաների շուրջ (պատմություն, արվեստ, կրոն, աստղագիտություն և այլն): Նաև ուսումնասիրեք տրված թեման համացանցով: Հատուկ իրեր հատկացրեք յուրաքանչյուր թեմայի շուրջ համապատասխան (հագուստ, գլխարկներ, անձրևանոց և այլն): Սովորողների հետ քննարկեք այն հարցերը, որոնք պետք է ուղղեն դասարանին, ինչպես մտապահեն տրված տեղեկատվությունը այցի ժամանակ: Աշակերտները պետք է արձանագրեն թեման թղթերի վրա՝ նկարելով: Վերանայեք այցի օրակարգը:
Օրինակ՝ **8 - րդ** դասարանում կազմակերպվում է ցուցահանդես, որի ժամանակ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր պաստառը՝ սիրելի տեսարժան վայրի մասին: Յուրաքանչյուր աշակերտի տրվում է 2-3 րոպե ներկայացնելու համար: Ցուցահանդեսը լինում է դասարանում, պաստառները կախվում են պատերին: Ուսուցչուհին լավագույն երեք աշակերտներին խրախուսելու համար պատվոգրեր է հանձնում:

17. Գովազդի ստեղծում
Այս մեթոդը հարմար է օտար լեզուների, ինչպես նաև աշխարհագրություն առարկայի համար:
Օրինակ՝ 1. Աշակերտները գտնվում են ռեստորանում և նրանց որպես տնային աշխատանք հանձնարարված ուտեստները ներառված են ճաշացանկում, սակայն բոլորը հորինված անվանումներով: Հյուրերին ծանոթ չեն ուտեստները, ուստի մատուցողը պետք է բացատրի, թե ինչ են դրանք իրենցից ներկայացնում ՝ դրանք գովազդելով:
2. Աշակերտները համացանցում ուսումնասիրում են Փարիզի, Հռոմի, Աթենքի և այլ քաղաքների տեսարժան վայրերը (տրված լեզվով) և նշում կարևոր և հետաքրքիր փաստերը: Նրանք պետք է ներբեռնեն կոնկրետ թեմային առնչվող նկարներ, տեքստեր նաև սահիկաշարան գովազդելով տվյալ քաղաքը՝ իր տեսարժան վայրերով, մշակույթով, սովորություններով: Դասի երկրորդ կեսին աշակերտներն այդ ամենը ներկայացնում են դասարանում:
3. Աշակերտները համացանցում որոնում են աստղերի կամ հայտնի մարդկանց լուսանկարները կամ օգտագործում են իրենց իսկ թվային լուսանկարները գովազդի համար:
Բոլորը բացատրում են, թե ինչպես են կատարել իրենց որոնումը և ինչ արդյունքների են հասել: Աշակերտները միմյանց հետ փոխանակում են տեղեկություններ ամենահետաքրքիր կայքերի մասին:

19. 25 րոպե վիրտուալ աշխարհում
Կարելի է աշակերտներին առաջարկել որ իրենց գեթ 25 րոպե պատկերացնեն վիրտուալ աշխարհում:

Խրախուսեք նրանց ստեղծել անձնանշան (ավատար), որը կճախրի դեպի վիրտուալ աշխարհ ինչպիսին է **“Երկրորդ Կյանքը”** կամ **“Տիեզերքում”**: Նրանք կարող են շփվել այլ մարդկանց կամ առարկաների հետ: Կարելի է երկխոսության կամ մենախոսության միջոցով ներկայացնել դա: Օրինակ՝ **9 – րդ** դասարանում անգլերենի դասագրքի հիման վրա մոլորակների մասին դասը անցնելիս աշակերտներին հնարավորություն է տրվում 15 րոպե պատկերացնել իրենց այլ մոլորակներում: Նրանք երկխոսության միջոցով պետք է հաղորդակցվեն միմյանց հետ՝ ստանձնելով այլմոլորակայինի դերը:

Տարբեր առարկաների ներառում դասարանում

Յուրաքանչյուր աշակերտի հանձնարարվում է նոր տեղեկություն բերել տարբեր առարկաների վերաբերյալ՝ պատմություն, քիմիա, աշխարհագրություն, նկարչություն և այլն: Փոխկապակցելով տարբեր առարկաները աշակերտները կապ են հաստատում տվյալ առարկայի հետ՝ առավել հետաքրքիր դարձնելով դասը:

Օրինակ՝ անգլերենի դասին Անգլիայի տեսարժան վայրերը անցնելիս մի աշակերտ տեղեկացնում է աշխարհագրական դիրքը, կլիման, ռեսուրսները և այլն, իսկ մեկ այլ աշակերտ Անգլիայի պատմությունը, մեկ ուրիշը արվեստը:

Եթե ուշադրություն դարձնենք նշած առաջադրանքների բնույթին, կտեսնենք, որ դրանք հիմնականում նպատակաուղղված են ՏՏ միջոցով բանավոր խոսքի զարգացմանը, միջմշակութային հաղորդակցական ունակությունների ձևավորմանը: Այդ ամենը իրականացնում ենք հետևյալ քայլերով.

ՆԱԽԱՌԻՆԿՆԴՐՈՒՄ: Աշակերտին առավել հեշտորեն կողմնորոշելու համար նրան նախօրոք պետք է ծանոթացնել, թե ըստ ուսումնական ծրագրի, իբրև վերջնական նպատակ, նա ինչպիսի՞ խոսք պետք է կարողանա ունկնդրել-հասկանալ՝ առօրյա խոսք, նորությունների հաղորդումներ, զրույց, ելույթ և այլն: Աստիճանական, քայլ առ քայլ աշխատանքով հնարավոր է հաղթահարել հնչող նյութի ընկալման հանդեպ սովորողի սկզբնապես կուտակած վախը կամ հուսահատությունը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ: Այս փուլում ունկնդրելուն՝ որպես օտար լեզվի յուրացման գլխավոր ուղու, առաջնային նշանակություն է տրվում: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի բառային շղթայի հնչյունները, բառերը, պարզ նախադասությունները ունկնդրելով հասկանալուն, քանի որ հասկանալու կարողությունն ու ճշգրիտ արտաբերումը զարգացնելու համար անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել օտար լեզվին բնորոշ հնչեղության վրա, ինչը հաջող փոխներգործության (interaction) հիմք է: Տեքստերն առատորեն պետք է ուղեկցվեն տեսողական նյութով (պատկերներ, առարկաներ, նկարներ, լուսանկարներ և այլն) և հնչյունային ցուցանիշներով (աղմուկ, հստակ արտահայտված հնչերանգ և այլն), որոնց վրա հենվելով՝ աշակերտն ավելի հեշտ կընկալի տեքստը: Տեքստերը չպետք է ծանրաբեռնված լինեն անծանոթ բառապաշարով ու քերականական կառուցվածքներով:

Տնային առաջադրանքների մեծ առավելությունն այն է, որ սովորողը կարող է տվյալ աշխատանքի համար իրեն հարմար ժամանակ տրամադրել և բազմիցս ունկնդրել հանձնարարված նյութը: Տնային հանձնարարությունները անսահման ազատություն են տալիս ինքնուրույն ուսումնական գործընթացի իրականացման համար, որի արդյունքները թե՛ հուզական, թե՛ որոշակի ուսումնական առաջընթացի տեսակետից գրեթե միշտ դրական են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պարբերաբար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման պայմաններում ավանդական մեթոդների համադրությամբ կարելի է բավականին բարձրացնել ուսուցման արդյունավետությունը: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում թույլ է տալիս հասանելի ձևով կիրառել սովորողների ճանաչողական պահանջները անհատական որակների ճանաչողական գործընթացների և զարգացման համար: ՏՀՏ կիրառումն ինտեգրված դասերին թույլ են տալիս անցնել բացատրական-պատկերազարդված ուսուցման միջոցից դեպի գործունեություն, որի ժամանակ երեխան դառնում է ուսումնական գործունեության ակտիվ սուբյեկտ: Դա նպաստում է սովորողների կողմից գիտելիքների մտածված ընկալմանը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ հնարավորություն են տալիս կրթության գործընթացի զարգացման համար:

Համակարգչի օգտագործումը ընդլայնում է աշակերտի ինքնուրույն աշխատանքի շրջանակը, հեշտացնում է կապը ուսումնական համակարգում, էլեկտրոնային գրադարաններում, ինչը նշանակում է ընդլայնում է կրթական համակարգը, ուսուցումը դառնում է աշակերտակենտրոն: Ուսուցիչը երբեմն դառնում է պրակտիկանտ, օգնական՝ բարձրացնելով աշակերտի ակտիվությունը և ինքնուրույնությունը: Ե՛վ աշակերտին, և՛ մանկավարժին մեծ հնարավորություն է տալիս նյութը հասանելի դարձնելու բոլորին: Դասի ընթացքում ամենակարևորը ուսուցչի և աշակերտի փոխըմբռնումն է, նյութի հաճախակի փոխանակումը:

Տեսաձայնային ծրագրերի լայն ընդարձակումը հնարավորություն է տալիս մեծացնելու դասի ընթացքում անգլերեն առարկայի պատկերավոր լինելը: Դրա հետ միասին շատ ժամանակ էր պահանջվում դասի ներկայացմանը պատրաստվելիս և հատկապես շարժանկարներ օգտագործելիս: Բայց ավելի շատ օգտագործելով համակարգչային տեխնոլոգիաները՝ ինտերնետային կապը հնարավոր է օգտագործել նոր նյութեր յուրացնելու համար և կիսվել ընկերների հետ սեփական փորձով: Համակարգիչը օգնում է ցույց տալու, բացատրելու, սովորեցնելու, պլաններ կազմելու, համակարգելու, և ընդհանրապես զարմանալի է, թե ինչպես էր առաջ այս ամենը իրականացվում ձեռքի միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Հ. Հ., Կոմպետենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը, Ե., 2013:

2. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Ղրիմյան, Ս. Խաչատրյան, Ն. Բայաթյան, Լ. Ալեքսանյան, Վ. Պուրուկուրու Համագործակցային ուսուցում

3. Люботинский А. А., Структурно -функциональная модель методической компетентности будущих учителей иностранного языка в условиях инновационной 142 образовательной среды, 2014, №8.